ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 օգոստոսի 2024թ. թիվ 540-Ա

Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԲԵՐԻ
Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2024 թվականի օգոստոսի 13-ի թիվ 539-Ա որոշումը և «ՀՀ Լոռու մարզի Ծաղկաբերի Դ.Մարտիրոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչա-տնտեսական մասի համակարգողի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար դիմած հավակնորդների հետ հարցազրույցի արդյունքում պայմանագրի կնքման մասին 2024 թվականի օգոստոսի 7-ի արձանագրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Սարգիս Ժորայի Սարգսյանին նշանակել «ՀՀ Լոռու մարզի Ծաղկաբերի Դ.Մարտիրոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով՝ 2024 թվականի օգոստոսի 20-ից:

2. Ս.Սարգսյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. օգոստոսի 13
ք.Վանաձոր